

30 ԲԱՐՈՒ

# ՄԷԾՄՈՒՄԻ ԱԽՊԱՐ

50 ԲԱՐՈՒ

DIRECTION DU JOURNAL  
MEDJMOUA-I-AHBA  
65, Grand'rue de Pétra, Taxis, 65

Ս. ՊՈՒՆԻ, ՖԻԴԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
Խաղաղության խնդիր  
Խաղաղության խնդիր  
Խաղաղության խնդիր

ՉԱՐՇԵՆՊԵՆ 4 ԷՎ 30 ՄՈՒՄՈՒՆԻ  
ԿԵՆՏՐԱԼ ԵՎ ԵՆԴՐԱԿԱՆ  
Խաղաղության խնդիր

مجموعة اخبار  
بكاوغلى تقسيم جادى و نوسرو

## ԲԱՐՇԵՆՊԵՆԻ ՊԵՏԻՐ ՀԱՅ ԵՎԵՐԵՍԻ ՈՅ ՄԷՉ

ԺԴ.

ՀԱՅԿԱՅ ԲԱՆԻ ԱՌ ԳԵՐ. Տ. ՎԵՐՈՅՐ

Յ. Գ. — Սոյն յօդուածներու շարքն սկսեց բաւական վերջ միայն իմացայ թէ ընդդիմախօս աշխարհական մը չէ, այլ եկեղեցական, և բարձրատիմաններէն մին զէն իւր պաշտօնով, Գործիւն ոճն և ոգին եկեղեցականութեան վայելուչ չլինելով քննադատ, ի հարկէ ինքնաբերաբար զուշակէ զայդ անկարելի էր լինէ, եթէ մի կողմանէ կը ցաւիմ իրեն հանդէպ խիստ լնգու գործածելուս, միւս կողմանէ կը սիրեմ յուսով թէ իրեն կրօնի պաշտօնուոր չլինի յառաի ընդվիզիլ ճշմարտութեան զէն, գիտնալով թէ Գործիւնն սեղանի մէջ և քրիստոնէի մը համար ճշմարտութենէ աւելի վսեմ բան չկայ արեւուտակ, ինչպէս էջմիածնական թերթեր իսկ զիտել առելն արդէն, Գեր. Տէր Վերոյր գործիւնն մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ հակառակ մոլորութիւններ, — եզնլեցական բառով — հերթիկոսութիւններ պատ. Այդ հարցնելու իրեն որ, և եթէ ամեն զարապ խօսքի հաշիւը պիտի պահանջէ մենք մի օր անաշտու ու ամենազէն Գործիւնն, ինչ ասկալի համար պիտի տանք նա, երբ իւր Աւետարանը խեղճութիւնով մարդկային ստատոր քարտեզած և ի զիր արձանագրած ենք փոխան աստուածային ճշմարտութեանց, և մինչ պարտինք լինել այլոց օրինակ խոսարհամարութեան, հնազանդութեան և պարտաճանաչութեան, ընդհակառակ եղած ենք զուցէ հրաշալիք մը կամապաշտութեան և քրիստոսամբոյ ինքնահաճութեան:

Բանաւան զեպանն է Գերադոյն Էսկին, որոյ հրամանները պէտք է հաղորդէ մարդկութեան անփոփոխ, ոչ մազիւ չափ աւելի և ոչ պակաս, եթէ ամենէն յետին իշխանն, ամենէն ճշմարտ Տէրութիւնն իրաւունք ունի կատարեալ, խղճամբ և փոյթութեամբ հնազանդութիւն պահանջելու իւր զեպանէն, Աստուած թաղաւորաց Թաղաւորն եթէ զուրկ պիտի լինի սոյն պիտի աներկալի իրաւունքէ մը, Անգլիոյ կամ Ռուսիոյ զեպան մը յանուն կարծեաց ազատութեան չկրնար իւր վեհապետին հակառակ որոշումներ հրատարակել, այսպիսի քայլ մ'առնելէ առաջ պէտք է նախ հրաժարի իւր պաշտօնէն, Ապա թէ ոչ մատնիչ ու դաւաճան մ'է նա բովանդակ մարդկութեան առջեւ: Ամենէն տարրական պարկեշտութեան, ողջմտութեան օրէնք մ'է այս, զոր ոչ ոք կրնայ ուրանալ:

Մարդիկ ազատ են, կ'ըսէք, խորհուրդ. բայց ինչու չէք ըսեր թէ Աստուած անհամեմատ կերպիւ աւելի ազատ է իւր խորհուրդները մեզ հարկադրելու և մենք պահանջելու մեր անձնական եղիլի կարծիքներուն, ինչպէս նաեւ մեր ճաշակներուն և նախասիրութեանց զոն ամբողջապէս ու առանց վերապահութեան: Մարդիկ, այո, ազատ են խորհելու, ինչպէս ազատ են գործելու, բայց ինչպէս ամեն գործ պատել չընենք գործողին, այնպէս և ամեն մտածութիւն պատել չընենք մտածողին: Կամքս ազատ է ամեն ճիշդ գործելու, բայց

արժանիքը կը կայանայ ոչ մին գործելու մէջ, իւր փառքը կը կայանայ անոնց հակառակ առաքելութիւնները գործելու մէջ: Միայն ազատ է ամենէն հրէշային մոլորութիւնները խորհելու, բայց իւր արժանիքն է պահել չխորհիլ, և իւր փառքն է անոնց հակառակ ճշմարտութիւնները խորհիլ, պաշտպանել ու ընդլայնել: Ահա աստիկ ազատութեան վերջնական թերթը: ասոր հակառակը պիտի մարդկային հոգին չճանչնալ, և իմաստասիրութեան ամենէն հիմնական օրէնքներն անտեսել կը նշանակէ: Ազատութեան վրայ երգեր չլինել և ճառել խօսելէ առաջ՝ պարտինք անոր ինչ ըլլալը գիտնալ և ուսուցանել:

Եկեղեցական մը ինչպէս ուրիշ ամեն ոք՝ կրնայ իւր ուզած համոզումներն ունենալ ի վտանգ և ի վնաս իւր, բայց այն օրն յորում կը տեսնէ թէ իւր համոզումներն հաշտուիլ չեն կրնար իւր սքեմին հետ, պէտք է հրաժարի կամ իւր համոզումներէն և կամ իւր սքեմէն: Իսկ եթէ առարկուի թէ ինչպիսի համոզման վրայ չէ, այլ նոր բան մ'ըսած ըլլալու, «ազատարարներու ծախանարութիւնները խելու վրայ միայն, այն ատեն, ափսոս, պատասխանատուութիւնն աւելի կը ծանրանայ, զի այս կը նշանակէ՝ ժողովրդից խղճին հետ խաղալ, Աւետարանը գործիք ընել մեր կրկն, և երկրի ամենէն նորարարական բանն — կրօնը — շահագործել յօգուտ մեր անախառնութեան և ունայնամտութեան: Ո՛ր, այսպիսի կատակերգութիւն մը բնաւ ներքի չէ մարդուն, ու եւս աւելի կ'երկարակնին, որ Պօղոս Առաքելոյն նման զգուշանք պէտք է անցնի ստատաշակաւոր մեծութեանց ցեղերուն քովն, և որոյ հոգին՝ արեւածաղիկ բարոյական պէտք է դարձած լինի միշտ զէն ի երկրին, զէն ի մեծութիւնն անհուն, Կեանքը կարճ է, եւ յաւիտեականութիւնն երկար: Կրնաք, Գեր. Սրբաշուն, հաշակաւոր անուն մը չլինել ձեզ, ամեն կողմանէ զրուստիք լսել, և աշխարհի բոլոր դասիներէր ժողովը ձեր զխուս վրայ, բայց վերջը, վերջը...: Կրնաք առաջնակարգ մատենագիր ու համայնագէտ հանճար մը կոչուիլ, և ձեր կոթքը գեղապարդել պատուոյ լեզուններով: Կրնաք երեւելի քարոզիչ և մեծայարգ Աւանդորդ մը լինել, բայց վերջը, վերջը...: Կրնաք մի օր պատրիարքապան և նոյն իսկ կաթողիկոսական Աթոռներու վրայ բազմիլ, վայելել ամեն հանգիստ ու ամեն պատիւ, և քառորդ դար ամբողջ ձեր սրինգին քաղցրութեամբ հովուել չորս միլիոն ժողովուրդ, բայց վերջը, վերջը...: Վերջը մահ, վերջը գերեզման, վերջը անմիջապէս դատաստան ամենատես Աջաց և հանուրց Սրբազէտին առջեւ: «Երանելիք են որ պահեն զպատուիրանս նորա. նոքա ունին իշխանութիւն ուսել ի փայտէն կենաց և մեռանել ընդ գործն քաղաքին: Այլ ելցեն արտաքս... ամենեկեան որ սիրեն զստորիսն» (Յայտն. ԻԲ. 14-15): Երանի՛ ա, նոր որ բովանդակ կենանք պատասխանութիւն մ'է յաւիտեական կեանքի: Ինչպիսի անուշահոտ առաքելութիւնը, քամի՛ չնորճք, որպիսի բարոյական գեղեցկութիւն կուգան զարդարել իւր հոգին: Այնպիսի կրնայ սխալիլ, բայց իւր վերջնական իսկ օգտակար կը լինի նա յաւիտեականութեան յետոյ կոչման և գերաւքանչ խոնարհամտութեամբ:

8 Դեկտ. 1910 ՎԵՐՈՅՐ Մ. Մ. Յ.

ՎԵՐՈՅՐ ԺԴ. ՅՈՂՈՒՄՆԻՍ  
(Ստալ) (Ուղիղ)  
Հակառակ զակառկ  
արքայամոր արքայամոր  
անցուկ անցուկ

## ՍՈՒ ՎԵՐՈՅՐ ԵՎ ՍՐԲԱՋԱՆ ԴԱՅՐԱՊԵՏՆ ՄԵՐ Տ. Տ. ՊՈՒՆՈՒ ՊԵՏԻՐ ԺԴ. ԹԵՐԶԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԷ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ

«Երանելիք ինչն որ սիրեցեան զեզ, եւ օյնծապեան նոյն ի խաղաղութեան իրաւ» (Տօվ. ԺԴ. 18).

Ո՛ր Դէտ իմաստուն  
Եւ Հովուապետ քաջարթուն  
Հաճէ՛ չընդունիլ  
Միշտ նոր ու շերտ առաւել  
Իղձկն համօրէն  
Որդւոցը անկեղծ սրտերէն:  
Ինչպէս մեզ հընար  
Փոխան բարեացդ տնայամբ  
Գոյ շնորհապարտ՝  
Որպէս արժան է չպարտ  
Տըկար ու անգոր  
Եմք ըստուգիւ մինչ այսօր:  
Սակայն երկինք ի վերուստ՝  
Յորմէ երեք չիք կորուստ  
Աւաքին սուրբ արդեանց,  
Ունի վարձքեր ձեզ անանց,  
Պրնակ չընդունի  
Ճակիրն ձեր բեղուն  
Հանգիստ անվերջով  
Եւ փառք հոգեթով՝  
Փոխան արի վատարկոց  
Սպերանաց նենգախոց:  
Թող բիրտ արգէտներ,  
Ոսկեք ազգաւոր  
Ուրանան յայտնի՝  
Ձեր յօղաբարի  
Ձերքերն, արժանիք՝  
Որովք այնքան եղիկներ և բազմաթիւ  
ընտանիք  
Ձեզ կը պարտին իրենց կեանքը, իրենց  
պատիւն ու կրօնը,  
Ձարք ժխտեն զայս, խոտուկանին թող  
միշտ աղնիւք և ըզգոնք:  
Թող զըրոյնք սեւանուն  
Լիրք և հըպարտ  
Մեր բոլորութիւն ու հեռուն  
Տարածեն  
Սուտ և զըրպարտ  
Վատօրէն:  
Թող նախանձու ստատանան  
Եւ արքանակը իւր բոլոր

Դիտնալով իսկ ուրանան  
Ճըգունք Ձեր քրտնաթոր,  
Ձեր վեհ հոգին աղաւաչ  
Որ չէ կասեր  
Ամենեւին դժուարութեան մը հանդէպ  
Եւ որ հանուրց շահն է խորհրդ միշտ ի դէպ:  
Եւ անոնք որ ամեն օր  
Դաշ իսկ մօտէն  
Կը տեսնեն  
Գործերը Ձեր նորանոր  
Եւ խորհուրդներ սրտիդ Հօր  
Անկեղծօրէն  
Թէ երկինք մեծ մի պարգեւ  
Տըրուցաւ կեանքը արդարեւ  
Կաթողիկէ կրօնի և Հայութեան տարա-  
բաշտ  
Որ կարօտ է լաւութեանց ոգւոց տնիք  
ու անախտ  
Երջանկութիւն է մեզ ցանկ լըսել ձայնիդ՝  
հայրական  
Յօժարամբոյ հնազանդել հըրամանացդ ա-  
մենայն,  
Կամքիդ մէջ զըսնել  
Ըստդ տնայարգի՝  
Կամքն իսկ երկինքի  
Յաւատ պաշտելի:  
Սրբերն համայն մեր աղբին բեզ նըլիւ-  
ուած են ի սպաս,  
Մատուալ սերունդն ուսանի յարգել զա-  
նունը վեհաբաւ,  
Եւ ուղղոց բերան  
Ահա օրհնաբան  
Կանգնի առ էն գերաբուն,  
Որ զըթութեամբ իւր անունն՝  
Ներեց այնչափ մեր յանցաւածոց, օժտեց  
ըզմեզ ճոխապէս  
Պարգեւելով մեզ առաջնորդ արդարաւունչ  
նոր Մովսէս:  
27 Դեկտ. 1910 Ն. Յ. Վ. Փ.  
Տօն Սրբոց Առաքելոցն  
Պետրոսի և Պողոսի

## ՀԱՏԻՍԵԻ ՄԱԼԻՍԵ

Իզմիրեան Սրբազանն ճնշալէ աւա-  
յընտա Հէյէթը բուհանիյէմիդին հազրը  
պուրուսմամաւը, ֆիթրիէրի ազ իշլալ  
իթմալի, ազ միւրեքթպ սարֆընա վէսի-  
լէ օլմաւը, էլան տա, զիշիւրիին ազ չօզ  
թահրիք օլունմըլ օլան հալի տէվամ իթ-  
մէքտէ, վէ պուրուն նէթիմէսի օլա-  
րաք, էրմէնի բաթրիկի վէթիլ Տ. Զեռնը  
Վ. Դուրեան, Իզմիրեան Սրբազան, Բուս  
բաթրիկի, Պուլկար էկազաբընը, խախա  
պաշը, վիւթէս վէ բիւսալը Օսմանիէի վէ  
սիւֆէրայը պու վէթիլ իշ զիւրաթէթ իթ-

տիկի սրբատա, Կ-Բաթրիք Թիւրքեան  
էֆ. ի զիւրաթէթ իթմալի, վէ Ս. Մուսուդ  
հօթուսը միւնասիպէթիլէ տէ էրմիւնի  
բաթրիկիւնէսինտէն պիզէ զիւրաթէթ կէ-  
լինմէմիլ տիր:  
Պու խուսուս, սոն նիւսաթէթիլմիպէն  
պիթիւտէ եազալըմըլ պիր մէքալէ-  
տէ իշար իթմալիլմիլ էտիպ վէ մուսու-  
լիմի մէշհուր Ռէթէս էֆ. Պէրպէրեանը  
հազալը պիր միւթալէսալընը, պաշա պիր  
սուրէթտէ թէքար իթմէմիզէ, եանի,  
«Պիւզ, Մէզնէպիւթիլ վէ Բիլիսէթիլ աքա-  
լիտի սիզին այնի բուհանիյիպէն հազըր  
պուրուսմամըլ մանի օլալըլ իշին, մա-  
լիւմ օլան բէսմը այնիտէ հազըր պուրու-  
նամաւը, ֆաղաթ այնի մէքալըր աքիւ-

\* \* Ճուճա իրթէսի կիւնիւ Կ-Բաթ  
էֆ. հազրէթլէրի՝ Արհ. Յարութիւն Ե.  
Ճամճնան զէ դարու քէհեսար Դերթ, Յո

Անահատան Զեբրու բաշանըն նշան-թա-  
ղընտա 40,000 լրւա գըյէթխտէթի գո-  
նաղը, էվգաֆ մահուլընտան զուպ,  
պլլա պէտէլ քէնտիսնէ վէրլտիկի աղա-  
ղըպըղընտան, հաճըրնա գարար վէրլմիէ  
տիր:

Սահիպի իմքիեազ վե  
 լիւսիրը մեհուլը դադերս  
 ՅՈՎՀ. ԹՕԼԱՅԵԱՆ